ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 հոկտեմբերի 2026 թվականի N 0673-Ա

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԾՈՎԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 5-ՐԴ ՓՈՂՈՑԻ 1-ԻՆ ՓԱԿՈՒՂՈՒ 05-051-0056-0025 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,23362 ՀԱ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍ, ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ, ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԳՈՒՅՔԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՑԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենգրքի 64-րդ հոդվածով, Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 42 և 43-րդ հոդվածներով, 26.12.2002 թվականի ՀՕ-510-Ն օրենքի 7-րդ հոդվածով, <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> 28 հունիսի 2008 թվականի ՀՕ-117-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության 27.04.2010 թվականի ՀՕ-50-ն օրենքի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 24.07.2025 թվականի <<Հատակագծերի ձևերը, հատակագծերին ներկայացվող պահանջները և հատակագծերի ներկայացման կարգը սահմանելու մասին>> թիվ 1028-ն որոշմամբ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 29.12.2005 թվականի N 2387-Ն որոշումը, <<Գեղարքունիք Նաիրի>> ՍՊԸ-ի կողմից 25.06.2025 թվականին տրված ինքնակամ իրականացրած շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը և Սեյրան Արտաշի Ղանդիլյանի դիմումը (ծնված՝ 02.12.1962 թ.), 07 մարտի 2024 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը՝ ժառանգության գործ 65, որակավորման վկայական ունեցող անձի կողմից կազմված հողամասի հատակագիծը և այն հանգամանքը, որ 05-051-0056-0025 կադաստրային ծածկագրով 0,23362 հա հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի առաջացնում սերվիտուտ՝ **որոշում եմ.**

1. Վարդենիս համայնքի Ծովակ բնակավայրի 5-րդ փողոցի, 1-ին փակուղու 05-051-0056-0025 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել՝ Ծովակ բնակավայր, 5-րդ փողոց, 1-ին փակուղի 6 բնակելի տուն հասցե:

2. Արտաշ Շադինի Ղանդիլյանի ժառանգորդ՝ Սեյրան Արտաշի Ղանդիլյանին (ծնված՝ 02.12.1962 թ.), համասեփականատերեր՝ Ասյա Հովհաննեսի Ղանդիլյանին (ծնված՝ 00.00.1941 թ.), Գոհար Արտաշի Խաչատրյանին (ծնված՝ 01.03.1964 թ.), Աննա Արտաշի Ղանդիլյանին (ծնված՝ 17.10.1972 թ.) և Հերմինե Արտաշի Ղանդիլյանին (ծնված՝ 20.02.1978 թ.) պատկանող Վարդենիս համայնքի Ծովակ բնակավայր, 5-րդ փողոց, 1-ին փակուղի 6 հասցեում 1936 թվականին կառուցված բնակելի տուն՝ 80,10 քմ ճանաչել օրինական՝ որպես նրանց սեփականություն, իսկ 2011 թվականին կառուցված բնակելի տուն՝ 28,95 քմ (ներքին մակերես՝ 19,60 քմ և 5,60 քմ), աստիճանահարթակ՝ 1,80 քմ, ավտոտնակ՝ 52,30 քմ (ներքին մակերես՝ 43,30 քմ), 2019 թվականին կառուցված խոհանոց, մառան՝ 41,30 քմ (ներքին մակերես՝ 16,80 քմ և16,50 քմ), անասնաշենք՝ 77,60 քմ (ներքին մակերես՝ 59,90 քմ), պարիսպ՝ 2,90 քմ և 2,20 քմ մակերեսով շինությունները՝ որպես ինքնակամ կառույց:

3. Վարդենիս համայնքի Ծովակ բնակավայր, 5-րդ փողոց, 1-ին փակուղի 6 հասցեի 0,23362 հա հողամասում 2011 թվականին կառուցված բնակելի տուն՝ 28,95 քմ (ներքին մակերես՝ 19,60 քմ և 5,60 քմ), աստիճանահարթակ՝ 1,80 քմ, ավտոտնակ՝ 52,30 քմ (ներքին մակերես՝ 43,30 քմ), 2019 թվականին կառուցված խոհանոց, մառան՝ 41,30 քմ (ներքին մակերես՝ 16,80 քմ և 16,50 քմ), անասնաշենք՝ 77,60 քմ (ներքին մակերես՝ 59,90 քմ), պարիսպ՝ 2,90 քմ և 2,20 քմ, (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2026ARUDJM) մակերեսներով շինությունները չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով՝ ճանաչել օրինական, որպես Սեյրան Արտաշի Ղանդիլյանի, Ասյա Հովհաննեսի Ղանդիլյանին, Գոհար Արտաշի Խաչատրյանի, Աննա Արտաշի Ղանդիլյանի և Հերմինե Արտաշի Ղանդիլյանի սեփականություն:

4. Օրինականացումը իրականացնել հետևյալ սահմանված գներով.

4.1 Բնակելի տուն և աստիճանահարթակ՝ 30,75 քմ x 10000 x 0.0874 = 26900 ՀՀ դրամ

4.2 Ավտոտնակ՝ 52,30 քմ x 6000 x 0.0874 = 27450 ՀՀ դրամ

4.3 Խոհանոց, մառան՝ 41,30 քմ x 6000 x 0.0874 = 21700 ՀՀ դրամ

4.4 Անասնաշենք՝ 77,60 քմ x 6000 x 0.0874 = 40700 ՀՀ դրամ

4.5 Պարիսպ՝ 5,10 քմ x 6000 x 0.0874 = 2700 ՀՀ դրամ

5. Ընդամենը 119450 (մեկ հարյուր տասնինը հազար չորս հարյուր հիսուն) ՀՀ դրամ, որը պետք է 60-օրյա ժամկետում մուծվի տեղական բյուջե (ինքնակամ շինության օրինականացման հաշվեհամար-900155101208):

6. Սեփականատերերի կողմից փաստացի օգտագործվող Ծովակ բնակավայրի 05-051-0056-0025 կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման 0,23362 հա հողամասը համաձայն 26.12.2002թ. ՀՕ-510-Ն օրենքի 7-րդ հոդվածի ճանաչվել է նրանց սեփականություն:

7. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ **ԱՇՈՏ ԲԱՐՍԵՂՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 05
ք. Վարդենիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 հոկտեմբերի 2026 թվականի N 0674-Ա

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱԲԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 05-068-0017-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,08475 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով, 10-րդ հոդվածի 8-րդ կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2011 թվականի N 1920-Ն որոշման կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով, ՀՀ կառավարության 20.12.2005 թվականի N 2387-Ն որոշմամբ սահմանված կարգով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 15 սեպտեմբերի 2005 թվականի N 1793-Ն որոշումը՝ **որոշում եմ.**

1. Վարդենիս համայնքի Նորաբակ բնակավայրի 05-068-0017-0001 կադաստրային ծածկագրով բնակավայրերի 0,08475 հա այլ հողատեսքը ճանաչել որպես Վարդենիս համայնքի սեփականություն:

2. Վարդենիս համայնքի Նորաբակ բնակավայրի 05-068-0017-0001 կադաստրային ծածկագրով բնակավայրերի 0,08475 հա <<այլ հողեր>> հողատեսքի գործառնական նշանակությունը փոփոխել բնակավայրերի՝ <<հասարակական կառուցապատում>> գործառնական նշանակության:

3. Վարդենիս համայնքի Նորաբակ բնակավայրի 05-068-0017-0001 կադաստրային ծածկագրով բնակավայրերի 0,08475 հա հողամասին տրամադրել՝ 1-ին փողոց, 11 հողամաս հասցե:

4. Կատարել իրավունքի պետական գրանցում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ **ԱՇՈՏ ԲԱՐՍԵՂՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 05
ք. Վարդենիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 հոկտեմբերի 2026 թվականի N 0675-Ա

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԾՈՎԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԱՐՍԵՆ ՌԱԶՄԻԿԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՄԱՔԵՆԻՍ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻՑ ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ՏՐՎԱԾ 6,0 ՀԱ ԱՐՈՏԱՎԱՅՐԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Վարդենիս համայնքի ղեկավարի N435-Ա որոշումը և արոտավայրի վարձակալ Արսեն Մուրադյանի դիմումը՝ 26.09.2026թվականի վարձակալության ժամկետը երկարաձգելու վերաբերյալ որոշում եմ.

1.Արոտավայրի վարձակալ Արսեն Մուրադյանի հետ կնքված 6,0 հա 4-րդ կարգի արոտավայրի պայմանագրի ժամկետը երկարաձգել ևս 3 տարի սկսած 06.10.2026թ-ից մինչև 06.10.2029թվականը, վարձավճարի չափը թողնելով անփոփոխ:

2.Պայմանագրի հետ կապված գործառույթների կատարումը վերապահել աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ **ԱՇՈՏ ԲԱՐՍԵՂՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 06
ք. Վարդենիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 հոկտեմբերի 2026 թվականի N 0676-Ա

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԻՎԱՆ ԶԱՎԵՆԻ ԱՍԱՏՐՅԱՆԻ ԿԱԽԱԿՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՐԵԼԱՀՈՂԵՐԻՑ ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ՏՐՎԱԾ 46 ՀԱ ՎԱՐԵԼԱՀՈՂԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով վարձակալ Իվան Ասատրյանի և Կախակն համայնքի ղեկավարի միջև կնքված 25.05.2001թվականի պայմանագիրը և պայմանագրի 5-րդ պարբերության 16-րդ կետի պահանջները վարելահողի վարձակալ Իվան Ասատրյանի դիմումը՝ 05.10.2026թ վարձակալության ժամկետը երկարաձգելու վերաբերյալ որոշում եմ.

1.Վարելահողի վարձակալ Իվան Ասատրյանի հետ 25.05.2001թվականին կնքված 46 հա վարելահողի պայմանագրի ժամկետը երկարաձգել ևս 25 տարի սկսած 06.10.2026թ-ից մինչև 06.10.2051թվականը, վարձավճարի չափը թողնելով անփոփոխ:

2.Պայմանագրի հետ կապված գործառույթների կատարումը վերապահել աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ **ԱՇՈՏ ԲԱՐՍԵՂՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 06
ք. Վարդենիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հոկտեմբերի 2026 թվականի N 0677-Ա

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 05-055-0077-0018 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005 թվականի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով Հարություն Երանոսյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Վարդենիս համայնքի Կարճաղբյուր բնակավայրի 26-րդ փողոցի. 05-055-0077-0018 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել՝ Կարճաղբյուր բնակավայր 26-րդ փողոց. 23 հողամաս հասցե:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ **ԱՇՈՏ ԲԱՐՍԵՂՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 07
ք. Վարդենիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հոկտեմբերի 2026 թվականի N 0678-Ա

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 17 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ <<ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՒԹ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 05-057-0006-0017 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 0640-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների դրույթներով՝ **որոշում եմ.**

Վարդենիս համայնքի ղեկավարի 17 սեպտեմբերի 2026 թվականի <<ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՒԹ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 05-057-0006-0017 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 0640-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը:

1.1 Որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ << 1. Վարդենիս համայնքի Կութ բնակավայրի Է. Բալասանյան 2-րդ փողոցի 1-ին նրբանցքի 05-057-0006-0017 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել՝ Կութ բնակավայր, Է. Բալասանյան 2-րդ փողոց, 1-ին նրբանցք 7 բնակելի տուն հասցե: >>:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ **ԱՇՈՏ ԲԱՐՍԵՂՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 07
ք. Վարդենիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 հոկտեմբերի 2026 թվականի N 0679-Ա

<<ԻՄԻՋ Մ. Գ. >> ՍՊԸ-ԻՆ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> ՀՀ օրենքի և Վարդենիս համայնքի ավագանու 24.01.2025 թվականի N 2-Ն որոշման դրույթներով և հիմք ընդունելով <<ԻՄԻՋ Մ. Գ. >> ՍՊԸ-Ի տնօրեն Աշոտ Կարապետյանի 05/10/2026 թվականի դիմում-հայտըորոշումեմ՝

1.Թույլատրել <<ԻՄԻՋ Մ. Գ.>> ՍՊԸ-ին Վարդենիս քաղաքի Ռոմանի փողոցի 12/8 հասցեին հարակից գտնվող գովազդային վահանակի վրա Ա կողմում 18 ք/մ մակերեսով տեղադրել այլ գովազդ (ՔՊ) 01/10/2026 թվականից մինչև 31/10/2026 թվականը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ **ԱՇՈՏ ԲԱՐՍԵՂՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 08
ք. Վարդենիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 հոկտեմբերի 2026 թվականի N 0680-Ա

<<ԻՄԻՋ Մ. Գ. >> ՍՊԸ-ԻՆ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> ՀՀ օրենքի և Վարդենիս համայնքի ավագանու 24.01.2025 թվականի N 2-Ն որոշման դրույթներով և հիմք ընդունելով <<ԻՄԻՋ Մ. Գ. >> ՍՊԸ-Ի տնօրեն Աշոտ Կարապետյանի 05/10/2026 թվականի դիմում-հայտը որոշում եմ՝

1.Թույլատրել <<ԻՄԻՋ Մ. Գ.>> ՍՊԸ-ին Վարդենիս քաղաքի Ռոմանի փողոցի 12/8 հասցեին հարակից գտնվող գովազդային վահանակի վրա Բ կողմում 18 ք/մ մակերեսով տեղադրված սոցիալական գովազդի (Կրթվելը նորաձև է) ժամկետը երկարացնել մինչև 31/10/2026 թվականը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ **ԱՇՈՏ ԲԱՐՍԵՂՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 08
ք. Վարդենիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 հոկտեմբերի 2026 թվականի N 0681-Ա

<<ԻՄԻՋ Մ. Գ. >> ՍՊԸ-ԻՆ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> ՀՀ օրենքի և Վարդենիս համայնքի ավագանու 24.01.2025 թվականի N 2-Ն որոշման դրույթներով և հիմք ընդունելով <<ԻՄԻՋ Մ. Գ. >> ՍՊԸ-Ի տնօրեն Աշոտ Կարապետյանի 05/10/2026 թվականի դիմում-հայտը որոշում եմ՝

1.Թույլատրել <<ԻՄԻՋ Մ. Գ.>> ՍՊԸ-ին Վարդենիս քաղաքի Երևանյան փողոցի 1/2 հասցեում, հարևանության մոտ գտնվող գովազդային վահանակի վրա Ա կողմում 18 ք/մ մակերեսով տեղադրել այլ գովազդ (ՔՊ) 01/10/2026 թվականից մինչև 31/10/2026 թվականը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ **ԱՇՈՏ ԲԱՐՍԵՂՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 08
ք. Վարդենիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 հոկտեմբերի 2026 թվականի N 0682-Ա

«ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿՈՒՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ «ԵԴԵՄԱԿԱՆ ՊԱՐՏԵԶ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 24-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի «Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու մրցույթի նախապատրաստման, անցկացման և արդյունքների ամփոփման կարգը հաստատելու մասին» թիվ 02-Ն հրամանով հաստատված կարգի 7-րդ կետի պահանջները՝ **որոշում եմ.**

Հաստատել «ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Ակունք բնակավայրի «Եդեմական պարտեզ» մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2026 թվականի հոկտեմբերի 9-ին նշանակված մրցույթն անցկացնող հանձնաժողովի հետևյալ անհատական կազմը՝

1) Աննա Ռուդիկի Վարդանյան – Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմ - ԿՄՍԵ և ՍԱ բաժնի պետ

2) Վարուժան Վարազդատի Ավետիսյան – Վարդենիս համայնքի ավագանու անդամ

3) Վանիկ Ժորայի Հարությունյան – ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ - ՏԿ և ՏԻ հարցերի վարչության պետ

4) Գեղամ Գևորգի Չարվադարյան – ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ- ԿՄՍ վարչության գլխավոր մասնագետ

5) Վրևիկ Գնելի Ասատրյան – Գիտական հաստատությունների ներկայացուցիչ - <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի թիվ 2 ՄԵԴ>> ՀՈԱԿ-ի տնօրեն

2.Հանձնաժողովի նիստերի քարտուղար նշանակել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի առաջատար մասնագետ Գոհար Խաչատրյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ **ԱՇՈՏ ԲԱՐՍԵՂՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 08
ք. Վարդենիս